պատմագրության մեջ, մինչև որ առաջ է գալիս ժամանակագրությունը կամ տարեգրությունն առանց անձնական ոճի նույնության»[10]: 17-18–րդ դարերի հայ պատմագրությունն արդեն յուրովի համադրում էր ոսկեդարյան ավանդույթներն ու 12-րդ դարից սկսած նկատվող ընդհանուր միտումները: Այդ զուգադրման արդյունքների առումով գուցե հետաքրքրական, բայց և որոշ առումներով վիճարկելի է նույն Մանուկ Աբեղյանի այն դիտարկումը, թե «Վերածնության շրջանի մեջ (նկատի ունի 17-րդ դարի գրական-մշակութային զարթոնքը–Ա.Ն.) պատմագրություն իսկական իմաստով գոյություն չունի: Մի քանի այդ անունը կրողները լոկ անարվեստ նկարագրողներ են... ...Այդ պատմագիրները (նրանց թվում Աբեղյանը դասում է նաև Առաքել Դավրիժեցուն–Ա.Ն.) իսկապես գրականության նյութ չեն կարող լինել, որքան պատմության ուսումնասիրության համար իբրև աղբյուր կարող են ծառայել»[11]: Այսինքն՝ Աբեղյանը, ըստ ամենայնի, զանց է առնում պատմագրության էատարրերից մեկը՝ գրական կողմը, փաստորեն, ակամա հանգելով նաև բուն ժանրի գոյության գրեթե ժխտման ուշ միջնադարում:

Անդրադառնալով նույն խնդրին՝ Հենրիկ Բախչինյանն իր հերթին նկատում է, որ 17-րդ դարի պատմագրական բոլոր երկերն էլ «ընդհանուր առմամբ, մնում են գեղարվեստական գրականության համակարգում՝ ներկայացնելով ժամանակի գեղարվեստական արձակի մի առանձին յուրօրինակ ճյուղը: Անշուշտ, այս շրջանի պատմագիրների երկերը չունեն Ոսկեդարի պատմագրության ո՛չ պատմական, ո՛չ էլ գեղարվեստական բարձր արժեքը: Բայց դրանք, անտարակույս, իրենց ժամանակի պատմագիտական և

---

[10] ***Մանուկ Աբեղյան,*** Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Անթիլիաս, 2004, էջ 64:

[11] Նույն տեղում, էջ 441: